ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ _____ առ "___" _____ 2020թ.

Ձեր № M/2167-20 առ "07" օգոստոսի 2020թ.

«Օստինատո» ՍՊԸ-ի տնօրեն՝
պրն. Կ. Հարությունյանին
էլ.փոստ. vakgroup.tender@mail.ru

[Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Հարությունյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ջեռուցման մարտկոցների ձեռք բերման նպատակով ս/թ մայիսի 20-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-67/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Օստինատո» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2020թ. հուլիսի 3-ին կնքվել է թիվ 01/166 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիր է սահմանվել «Օստինատո» ՍՊԸ-ի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով նշված տեխնիկական բնութագիրը, այն է՝ «Ջեռուցման, այլումինե, սպիտակ, "LAMMIN" C2-500, բարձրությունը 580մմ, լայնությունը 80մմ, հաստությունը՝ 96մմ»: «Օստինատո» ՍՊԸ-ի կողմից ս/թ հուլիսի 7-ին մատակարարվել է "LAMMIN" ECO AL500-100 ջեռուցման մարտկոցը բարձրությունը 572մմ, լայնությունը 76.6մմ, հաստությունը՝ 95մմ (մոդելը և բոլոր երկրաչափական չափսերը տարբերվում են):

Կողմերի միջև կնքված Պայմանագրի՝

- 2.4.1 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
- 2.4.2 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում,
- 2.4.4 կետի համաձայն Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով:

Առաջնորդվելով ս/թ հուլիսի 7-ի թիվ 07.20-160 վերահսկողության ակտով՝ «Օստինատո» ՍՊԸ-ն ս/թ հուլիսի 9-ին ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ և առաջարկվել է մինչև Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույց) սահմանված մատակարարման ժամկետի ավարտը փոխարինել մատակարարված ջեռուցման մարտկոցը Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքով:

Հիմք ընդունելով

- «Օստինատո» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2020թ. հուլիսի 3-ին կնքվել է թիվ 01/166 պայմանագրի դրույթները,
- ս/թ հուլիսի 7-ի թիվ 07.20-160 վերահսկողության ակտը;
- այն հանգամանքը, որ «Օստինատո» ՍՊԸ-ն պայմանագրով սահմանված ժամկետում չի փոխարինել տեսակի խախտմամբ մատակարարված ապրանքը պայմանագրին համապատասխան ապրանքով և չի դիմել պայմանագրի 8-րդ բաժնի 8.6 կետով սահմանված կարգով ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման համար,
- պայմանագրի հավելված 1-ով սահմանված մատակարարման ժամկետը՝ պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օր (02.08.2020),

տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Օստինատո» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2020թ. հուլիսի 3-ին կնքված թիվ 01/166 պայմանագիրը և առաջարկում հնարավորինս սեղմ ժամկետներում ետ տանել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը:

Հարգանքներով,

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Հ. Գևորգյան
ԳՄԾ պետ
Հեռ. 010-20-04-91